Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ:

ՀԻՄԱՐ ԱՂՋԻԿԸ

Սարկավագի որդին, սեմինարիստ, որ արձակուրդներին գյուղ էր եկել ծնողների մոտ, մի անգամ մութ ու շոգ մի գիշեր արթնացավ մարմնական ուժեղ գրգռմունքից և անքուն պառկած Է՛լ ավելի բորբոքեց իրեն երևակայությամբ. ցերեկը, ճաշից առաջ գետախորշի վերևի առափնյա ուռուտից նա թաքուն նայում էր, թե ինչպես աշխատանքից հետո գալիս էին այդտեղ գյուղի աղջիկները, քրտնած սպիտակ մարմիններից գլխի վրայով հանում շապիկներն ու աղմուկ-ծիծաղով, կռանում ու նետվում էին տաք փայլփլող ջուրը. հետո, այլևս չկարողանալով իրեն զսպել, նա վեր կացավ, մթության մեջ հաշտով մտավ խոհանոց, որ սև էր ու տաք, վառած վառարանի պես, ձեռքերն առաջ մեկնած շոշափելով գտավ թախտը, որի վրա քնում էր խոհարարը՝ աղքատ, անտուն-անտեր մի աղջիկ, խենթը, ինչպես ասում էին նրան, և աղջիկը վախից նույնիսկ չբղավեց: Այդպես նա աղջկա հետ ապրեց ամբողջ ամառ ու մի տղա ունեցավ ու տղան էլ մոր հետ ապրում ու մեծանում էր խոհանոցում: Սարկավագը, սարկավագի կինը, տեր հայրն ինքը և նրա ամբողջ տունը, խանութպանի ողջ ընտանիքը, ուրյադնիկն ու իր կինը, բոլորը գիտեին՝ տղան ումից է, և սեմինարիստը երբ գալիս էր արձակուրդին, տեսնել չէր կարողանում նրան՝ ամոթից չարացած իր անցյալի համար. ապրել է խենթի հետ:

Երբ նա ավարտեց. «փայլուն», ինչպես պատմում էր բոլորին սարկավագը, և ակադեմիա ընդունվելուց առաջ նորից ամռանը արձակուրդներին եկավ ծնողների մոտ, սրանք առաջին իսկ տոն օրը հյուրեր հավաքեցին թեյի, որպեսզի նրանց առջև հպարտանան ապագա ակադեմիկոսով: Հյուրերն էլ էին խոսում նրա փայլուն ապագայի մասին, թեյ էին խմում, տեսակ-տեսակ մուրաբաներ ուտում, ու երջանիկ սարկավագը այդ աշխույժ զրույցի ժամանակ գործի գցեց գրամոֆոնը, որ սկզբում խշխշաց, հետո սկսեց բարձր բղավել: Բոլորը լռեցին ու հաճույքի ժպիտը դեմքներին սկսեցին ականջ դնել երգի սրտակեղեք ձայներին, երբ հանկարծ սենյակ ներս ընկավ և անճոռնի, անկապ սկսեց պարել, ոտքերով դոփդոփել խոհարարուհու տղան, որին մայրը, մտածելով հիացնել բոլորին, ասել էր հիմարաբար. «Վազ տուր, տղաս, պարի»: Բոլորը հանկարծակիի եկած շփոթվել էին, իսկ սարկավագի որդին կատաղությունից կարմրատակած վագրի նման հարձակվեց տղայի վրա ու դուրս շպրտեց սենյակից այնպիսի ուժով, որ տղան գլորվեց նախասենյակ:

Հաջորդ օրը սարկավագն ու սարկավագի կինը իրենց որդու պահանջով տնից վռնդեցին խոհարարուհուն: Նրանք բարի, խղճով մարդիկ էին, շատ էին ընտելացել այդ աղջկան, սիրում էին նրան իր հեզության, իր խոնարհության համար և ամեն կերպ խնդրեցին որդուն խղճալ նրան: Բայց որդին մնաց անհողդողդ, ու չհամարձակվեցին նրա խոսքը չկատարել: Իրիկվա դեմ խոհարարուհին լռիկ լալով ու մի ձեռքին իր փոքրիկ կապոցը, մյուսով տղայի ձեռքը բռնած, գնաց նրանց տնից:

Ամբողջ ամառ դրանից հետո նա գյուղից գյուղ էր ման գալիս ու ողորմություն մուրում ի սեր Քրիստոսի: Նրա շորերը մաշվել էին, մազերը գզգզվել, այրվել ու խանձվել էր նա քամուց ու արևից, նիհարել, մնացել էր կաշին ու ոսկորը, բայց գնում էր անդադրում: Նա գնում էր ոտաբոբիկ, պարկը մեջքին գցած, բարձր ցուպին կռթնած շրջում էր գյուղեգյուղ ու լուռ գլուխ ծռում ամեն խրճիթի առաջ: Տղան քայլում էր նրա ետևից, նույնպես մի պարկ փոքրիկ ուսին, հագին մոր հին կոշիկները, պատառոտված ու կոշտացած, դեն նետած անպետք կոշիկի նման:

Տղան այլանդակ էր: Մեծ, տափակ գագաթ վարազի կարմիր մորթիով, տափակած քիթ լայն քթածակերով, աչքերը ընկույզի գույնի ու շատ փայլուն: Բայց երբ ժպտում էր, շատ դուրեկան էր:

28 սեպտեմբերի 1940